ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2022թ. N------- -Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 17-Ի N106-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ի մասով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի հունիսի 17-ի «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N106-Ա որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀՐ. ՄԱՐԳՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 17-Ի N106-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկը (այսուհետ՝ Հիմնարկ) հիմնադրվել է Երևան քաղաքի ավագանու 23.04.2019թ ««Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկ ստեղծելու և դրա կանոնադրությունը հաստատելու մասին» №90-Ա որոշմամբ: Պետական գրանցումն ստացել է 20.05.2019թ (գրանցման համար՝ 286.180.1074935, ՀՎՀՀ՝ 02697772): Երևան քաղաքի ավագանու 17.06.2019թ № 106-Ա որոշմամբ հաստատվել է Հիմնարկի կազմակերպական կառուցվածքը, որը փոփոխվել է Երևան քաղաքի ավագանու 10.09.2019թ № 135-Ա որոշմամբ:

Գործող հաստիքացուցակով հաստատված է թվով 853 հաստիք: Վերջին երկու տարվա փորձը ցույց տվեց, որ համալրված են լինում միջինում 760 միավոր հաստիքներ: Մոտ 90 միավոր հաստիք մշտապես թափուր է մնում:

Ստեղծման օրվանից մինչ օրս Հիմնարկը՝ տարբեր ժամանակահատվածներում փուլ առ փուլ համալրվել է տեխնիկայով և այսօր առկա է ընդհանուր թվով 120 միավոր տեխնիկա (աղբատար, փոշեկուլ, տրակտորներ, ինքնաթափ և բազմաֆունկցիոնալ մեքենաներ):

Հիմնարկի ստեղծման օրվանից աշխատանքների ծավալները տարեց տարի ավելանում են: Բազմաբնակարան շենքերի գործող թվով 3415 աղբախցերի ավելի քան 90 %-ը փակվել և կոնսերվացվել են, որոնց աղբահանությունը իրականացվում էր այլ կազմակերպությունների միջոցով: Փակվող և կոնսերվացվող աղբախցերի փոխարեն բազմաբնակարան շենքերի աղբը գեներացվում է նոր տեղադրված աղբամաններում, որոտեղից աղբահանությունը իրականացնում է Հիմնարկը: Աղբախցերի կոնսերվացման աշխատանքները դեռևս շարունակվում են և Հիմնարկի աշխատանքների ծավալը ևս ավելանում:

Բացի այդ, Հիմնարկի գործող կառուցվածքում առկա է որոշ անհամապատասխանություններ, օրինակ՝

Ներկայիս կառուցվածքում անձնակազմի կառավարման բաժինը ներառված է Ֆինանսատնտեսական բաժնում և մեկ բաժնում առկա երկու բաժնի պետ՝

ֆինանսատնեսական բաժնի պետ-գլխավոր հաշվապահ և անձնակազմի կառավարման բաժնի պետ: Անձնակազմի կառավարման բաժնի պետի հաստիքի պաշտոնային դրույքաչափը հավասարեցված է շարքային հաշվապահի պաշտոնային դրույքաչափին: Նույն բաժնի մեջ են մտնում նաև տնտեսվարն ու վարչական շենքի հավաքարարները: Աղբահանության վարորդները ներառված են աղբահանության բաժնում, բազմաֆունկցիոնալ մեքենաների վարորդները՝ սանմաքրման բաժնում, սակայն տրանսպորտային միջոցները գտնվում են գլխավոր ինժեների և տեխնիկական միջոցների պատասխանատու ինժեներիների պատասխանատվության ներքո: Աղբամաններ ախտահանող բանվորները ներառված են սանմաքրման բաժնում:

Վերոնշյալ հանգամանքների պայմաններում Հիմնարկի գործող կազմակերպական կառուցվածքը այլևս չի նպաստում, որ Հիմնարկը լիարժեքորեն իրականացի իր կանոնադրական նպատակները, ինչպես նաև չի նպաստում Հիմնարկի զարգացմանը:

Ելնելով վերոգրյալից առաջարկում ենք կազմակերպական կառուցվածքի և հաստիքացուցակի փոփոխություն: Կից ներկայացվում են կառուցվածքի և հաստիքացուցակի առաջարկվող տարբերակը:

Գործառույթների հստակեցման և տարանջատման արդյունքում նոր տարբերակում առաջարկվում է նոր ստորաբաժանումներ: Հիմնարկի գործունեությունը ավելի արդյունավետ կազմակերպելու համար պահանջվող անհրաժեշտ հաստիքները ձևավորվել են թափուր հաստիքների փոխարեն, ինչպես նաև բազմաբնակարան շենքերի աղբախցերի փակման և կոնսերվացման արդյունքում առաջացած տնտեսումների հաշվին:

Առաջարկվող փոփոխությունների հիմնավորումներն ըստ առաջարկվող հաստիքացուցակի:

Վարչական մաս

<u>Գործավար (թվով 1)</u>

Հաստիքի անհրաժեշտությունը անմիջականորեն պայմանավորված նշված հաստիքը զբաղեցնող աշխատակցի կողմից իրականացվող աշխատանքների կարևորությամբ: Մասնավորապես՝ վերջինս ապահովում է Հիմնարկի փաստաթղթաշրջանառությունը, ինչպես նաև Հիմնարկի տնօրենի կազմակերպչական և տեխնիկա-տեղեկատվական աշխատանքների իրականացումը:

Ընդունում, գրանցում և բաշխում է փաստաթղթերը ըստ հասցեատերերի, հետևում օրվա ընթացքում տնօրենին ներկայացվելիք ստորագրման ենթակա փաստաթղթերի ճիշտ ձևավորմանը և դրանց կատարման ժամկետներին: Մշակում է

գործերի անվանացանկ և արխիվացնում փաստաթղթերը, կազմակերպում այցելուների ընդունելություն, ծանոթանում նրանց առաջադրած խնդիրներին և իր իրավասության շրջանակներում ընթացք տալիս դրանց: Տնօրենի հանձնարարությամբ կազմակերպում է խորհրդակցություններ, ժողովներ, հանդիպումներ և այլ միջոցառումներ, պատասխանում հեռախոսազանգերին: Ապահովում է տնօրենին անհրաժեշտ տեղեկատվությունը, ինչպես նաև իրականացնում տնօրենի հանձնարարությամբ այլ գործառույթներ:

Ներկայում այս աշխատանքների մի մասը իրականացվում է Անձնակազմի կառավարման բաժնի աշխատակիցների կողմից, սակայն, Անձնակազմի կառավարման բաժնի աշխատանքների ծավալը գործավարի վերոնշյալ գառործառույթների հետ համատեղել ուղղակի հնարավոր չէ:

<u>ՏՏ և էլեկտրոնային հսկողության համակարգերի բաժին (թվով 2)</u>

Գործող հաստիքացուցակով առկա է ՏՏ մոնիթորինգի պատասխանատու (թվով 1) և վերահսկողության պատասխանատու (թվով 3) հաստիքներ, որոնք մեքենաների վերահսկման համար նախատեսված էլեկտրոնային ծրագրի միջոցով իրականացնում են շուրջօրյա հսկողություն Հիմնարկի տրանսպորտային միջոցների տեղաշարժի, վառելիքի ծախսի և մեքենաների հետ կապված այլ տվյալների նկատմամբ:

Հարկ է նշել, որ տրանսպրտային միջոցների հսկողությունը կատարվում է շուրջօրյա և նշված աշխատանքը դիտարկվում է Հիմնարկի կարևորագույն հսկողական գործառույթներից և սակավաթիվ աշխատակիցների պայմաններում այն հնարավոր չէ ավելի արդյունավետ և վերահսկելի դարձնել: Որպեսզի նշված աշխատանքները իրականացվեն ավելի արդյունավետ, կառավարելի, հերթափոխի յուրաքանչյուր աշխատակցի պարտականությունն ու պատասխանատվությունը լինի ավելի հստակեցված, հաշվի ունենալով, որ երկու տարբեր հաստիքային միավորներ իրականացնում են միևնույն գործառույթները, առաջարկվում է՝

միավորել դրանք մեկ ստորաբաժանման մեջ, այն անվանել ՏՏ և էլեկտրոնային հսկողության համակարգերի բաժին հետևյալ հաստիքներով՝ բաժնի պետ (թվով 1) և օպերատոր (թվով 5):

<u>Վերահսկողներ՝ (թվով 4)</u>

Հիմնարկի կողմից իրականացվող աշխատանքները կատարվում են Երևան քաղաքի բոլոր վարչական շրջաններում երկու հերթափոխով: Հերթափոխի աշխատանքի ժամերի ընթացքում աշխատակիցների (այդ թվում՝

պատասխանատուների) կողմից աշխատանքային պարտակա-նությունների անխափան և պատշաճ կերպով կատարման, տարածքում գտնվելու, հաճախումների և կարգապահության նկատմամբ պարբերական հսկողության իրականացման համար թվով 4 վերահսկող հաստիքային միավորի անհրաժեշտություն է առաջացել: Նրանք գործելու են հիմնարկի տնօրենի անմիջական ենթակայությամբ:

Հարկ է նշել, որ գործող հաստիքացուցակում առկա վերահսկողության պատասխանատու հաստիքները նախատեսված են էլեկտրոնային հսկողության համակարգերի օպերատորի գործառույթ իրականացնելու համար: Ի սկզբանե Երևանի ավագանու 2019 թվականի հունիսի 17-ի N 106-Ա որոշմամբ հաստատված հատիքացուցակում նշալ հաստիքը անվանվել էր «վերահսկողության պատասխանատու (GPRS համակարգ)», որի անվանումը հաջորդ հաստիքացուցակում փոխվել է վերահսկողության պատասխանատու՝ առանց (GPRS համակարգ)-ի, սակայն գործառույթը մնացել է նույնը: Այսինքն՝ առաջարկվող հաստիքացուցակով նախատեսված թվով 4 վերահսկող հաստիքների գործառույթները տարբերվում են գործող հաստքացուցակով նախատեսված վերահսկողության պատասխանատու հաստիքներից, իսկ առաջարկվողը՝ խիստ անհարաժեշտ է տարածքներում աշխատանք իրականացնող աշխատակիցների գործունեությունը հսկելու համար:

<u>Հաշվապահ (թվով 2)</u>

Գործող կառուցվածքում առկա է թվով 1 գլխավոր և թվով 2 հաշվապահի հաստիքներ: Հիմնարկի զարգացման, պահեստի առաջացման և մեծացման, պաշարների շարժի և տեխնիկական մասի հզորացմանը զուգընթաց, ինչպես նաև ՊԵԿ կողմից իրականացված ստուգումների արդյունքում Հիմարկը որպես հարկ վճարող հանդսացող համարվելու պատճառով համապատասխան ֆինանսական, կառավարչական և հարկային հաշվառում վարելու անհրաժեշտություն է առաջացել: Այդ նպատակով առաջարկում ենք ավելացնել թվով 2 հաշվապահի հաստիք: Հարկ եմ համարում հիշեցնել, որ Հիմնարկի բյուջեն կազմում է 4,6 մլրդ դրամ, նեկայում փաստացի ունի թվով 772 աշխատակից, աշխատում է 24 ժամյա գրաֆիկով և ամեն օր ունի վառելիքի և նյութատեխնիկական ծախսեր: Առկա և ավելացող ծավալի աշխատանքները 3 մասնագետները ֆիզիկապես չեն հասցնելու կատարել ժամանակին և պատշաճ կերպով:

Ավտոպարկ

<u>Տեխզննող-դիսպետչեր՝ (թվով 4)</u>

Հիմնարկի յուրաքանչյուր ավտոտրանսպորտային միջոց շահագործվում է մեկից ավելի վարորդների կողմից՝ երկու հերթափոխով, որի արդյունքում ավտոտրանս-պորտային միջոցների խափանումն ու անսարքության դեպքերը հաճախակի են դառնում, ինչպես նաև դժվարանում է հսկողություն իրականացնել և պարզել թե, որ հերթափոխի վարորդի շահագործման ժամանակ է առաջացել անսարքությունը:

Ուստի տրանսպորտային միջոցների անխափան և անվտանգ շահագործումն ապահովելու համար անհրաժեշտ են մասնագետներ, որոնք յուրաքանչյուր հերթափոխի ավարտին կհայտնաբերեն օրվա ընթացքում շահագործումից առաջացած անսարքու-թյունները, դրանց պատճառներն ու վտանգավորության աստիճանը: Վերջիններիս պարտականությունների մեջ է մտնելու հերթափոխի ավարտին մեքենաների տեխնիկական վիճակի, արտաքին տեսքի ամենօրյա պարտադիր զննումը (տրանսպորտային միջոցի հավաքակայան մտնելու պահին): Արդյունքում նույն պահին կհայտնաբերի տրանսպորտային միջոցի տվյալ վարորդի շահագործումից առաջացած անսարքությունները և կուղղորդվի վերանորոգման: Կկանխվի վարորդների անփութությունը, ու կապահովվի տրանսպորտային միջոցների աշխատանքային երկարակեցությունը, ինչպես նաև տրանսպորտային միջոցը սարքին վիճակում կփոխանցվի հաջորդ հերթափոխի վարորդին:

Տեխնիկական մաս

<u>Գլխավոր մեխանիկ՝ (թվով 1)</u>

Գլխավոր մեխանիկ պատասխանատու է անսարքին մեքենաների որակով և ժամանակին վերանորոգման համար: Իր լիազորությունների շրջանակում պարտավոր կազմակերպել և հսկել տեխնիկական մասի վարպետների աշխատանքները, Հիմնարկի պահեստից ստանա տրանսպորտային միջոցի նորոգման համար անհրաժեշտ պահեստամասերը: Արդյունքում հնարավոր կլինի հիմնարկի տրանսպորտային միջոցները սարքին վիճակում հանձնել հաջորդ հերթափոխի վարորդին, այդպիսով ստանձնելով ավտոպարկի տեխնիկական ծառայության անխափան աշխատանքի իրականացման պատասխանատվությունը:

<u>Զոդող (թվով 1)՝</u>

Հիմնարկի կողմից շահագործվող տրանսպորտային միջոցները պատկանում են , հատուկ տեխնիկա դասակարգմանը, որոնց վրա տեղադրված են տարբեր մետաղյա մեխանիզմներ (աղբահավաք, փոշեկուլ, աղցան, ցիստեռն և այլն): Այդ մեղանիզմները՝ հատկապես աղբահավաքները, շահագործման ընթացքում հաճախակի կոտրվում են: Դրանց վերանորոգման աշխատանքը հնարավոր է կատարել միայն հատուկ զոդման

միջոցով: Մասնագետի և համապատասխան սարքավորման բացակայության պատճառով հնարավոր չի եղել զոդման աշխատանքները կատարել հիմնարկում, այդ իսկ պատճառով տրանսպրտային միջոցը տեղապոխվել է մրցութային կարգով ձեռք բերված զոդման ծառայություններ իրականացնող կազամակերպությունների արհեստանոց, որտեղ վերանորոգումը տևել է 3 - 5 օր: Արդյունքում տրանսպորտային միջոցը առնվազն 3 - 5 օր չի աշխատել և խաթարվել է հերթափոխի կատարվելիք բնականոն աշխատանքը:

Հետագայում նմանատիպ խնդիրներից խուսափելու, աշխատանքները ավելի արդյունավետ և տնտեսապես ավելի օգտակար կազմակերպելու համար անհրաժեշտություն է առաջացել ունենալ զոդող մասնագետի հաստիք: Հարկ է նշել, որ մրցութային կարգով ձեռք բերվող զոդման ծառայությունները տարեկան հաշվարկով ավելի թանկ են քան առաջարկվող մեկ հաստիքը:

Ներկարար (թվով 1)՝

Հաշվի առնելով, որ ամառային և ձմեռային ռեժիմների անցման և բազմաֆունկցիոնալ մեքենաների ձևափոխման (աղցան-ջրցան) աշխատանքներ կատարելու ընթացքում վնասվում է մեքենաների արտաքին ներկի շերտը, ինչպես նաև ԱՊՊԱ-ների հետևանքներով, անկախ ՃՏՊ-ի մեղավոր կողմ լինելու հանգամանքից, տրասպրտային միջոցների արտաքին տեսքը վերականգնելու և դրանց թամություն հաղորդելու համար անհրաժեշտ է ներկարար-մասնագետի հաստիքը:

Խառատ՝ (թվով 2)՝

2020թ ընթացքում խառատի և հիդրավլիկայի համակարգի նորոգման ծառայությունների ձեռքբերման համար ծախսվել է 16,6 մլն դրամ, 2021թ՝ 24,1 մլն դրամ: Նման ծառայությունների ծավալը ավելացման միտում ունի, կապված տեխնիկայի շահագործման և հնացման հետ: Ծախսերի աճը զսպելու համար Հիմնարկը ձեռք է բերել համապատասխան հաստոցները (թվով 4): հետագա աշխատանքները կանոնակարգված կազմակերպելու համար անհրաժեշտ է համապատասխան հաստիքներ, Հիմնարկի ուժերով իրականացնելու այդ աշխատանքները:

Վարպետ (թվով 3)

Գործող կառուցվածքում առկա է ավտոմեքենայի թափքի վարպետի թվով 3 հաստիք: Տրանսպորտային միջոցների աշխատանքային ժամերին Երևան քաղաքի տարբեր վարչական շրջաններում տրանսպորտային միջոցների խափանման դեպքերը հաճախակի են պատահում: Պատահում են այնպիսի իրավիճակներ, որ խափանված մեքենան շարժվելու ենթակա չի լինում: Նման դեպքերում խափանված մեքենան

վերանորոգելու համար վարպետներն են մոտենում մեքենային: Բացի այդ Հիմնարկի հերթափոխային աշխատանքային ռեժիմը անխափան կազմակերպելու համար անհրաժեշտ է ունենալ 2-րդ հեթափոխին սպասարկող վարպետներ՝ տրանսպորտային միջոցները արագ վերանորոգելու և շուրջօրյա աշխատանքները սարքին մեքենաներով կազմակերպելու համար:

Պահեստապետ (թվով 1)

Գործող կառուցվածքում առկա է թվով 1վառելիքի և նյութատեխնիկական պահեստի պատասխանատու հաստիք: Հիմնարկի հերթափոխային աշխատանքային ռեժիմի հետ կապված անհրաժեշտություն է առաջացել ունենալ 2-րդ հեթափոխի պահեստապետ տրանսպորտային միջոցների արագ վերանորոգման համար պահեստից պահեստամասեր բաց թողելու նպատակով:

Մասնագիտացված բաժիններ

Աղբահանության բաժին

Հերթափոխի պետ (բաժնի պետի տեղակալ թվով 2)

Մասնագիտական բաժինները աշխատում են երկու հերթափոխով, հետևաբար բաժնի պետը աշխատանքային օրվա ընթացքում միայնակ չի կարող հասցնել բաժնի աշխատանքների պատշաճ կերպով և ժամանակին կազմակերպումը, միաժամանակ հսկողություն իրականացնել վարչական շրջաններում աշխատակիցների (բանվոր, գծային պատասխանատու) աշխատանքների նկատմամբ: Հերթափոխի աշխատանքները պատշաճ կազմակերպելու համար անհրաժեշտություն է առաջանում ավելացնել հերթափոխի պետ (բաժնի պետի տեղակալ) թվով 2 հաստիքներ: Տվյալ հաստիքները նախատեսում ենք ավելացնել աղբահանության բաժնի թվով 24 պատասխանատուների հաստիքներից 2 թափուր հաստիքների կրճատումով՝ առանց քանակային և ֆինանսական փոփոխությամբ:

Սանմաքրման բաժին

Հերթափոխի պետ (բաժնի պետի տեղակալ թվով 2)

Մասնագիտական բաժինները աշխատում են երկու հերթափոխով, հետևաբար բաժնի պետը աշխատանքային օրվա ընթացքում միայնակ չի կարող հասցնել բաժնի աշխատանքների պատշաճ կերպով և ժամանակին կազմակերպումը, միաժամանակ հսկողություն իրականացնել վարչական շրջաններում աշխատակիցների (հավաքարար, խմբավար պատասխանատու) աշխատանքների նկատմամբ: Հերթափոխի աշխատանքները պատշաճ կազմակերպելու համար անհրաժեշտություն է առաջանում ավելացնել հերթափոխի պետ (բաժնի պետի տեղակալ) թվով 2 հաստիքներ: Տվյալ

հաստիքները նախատեսում ենք ավելացնել սանմաքրման բաժնի թվով 24 պատասխանատուների հաստիքներից 2 թափուր հաստիքների կրճատումով՝ առանց քանակային և ֆինանսական փոփոխությամբ:

Հավաքարար (թվով 200)

Երևան քաղաքի մակերեսը 223կմ² է: Ձեռքով մաքրման ենթակա մակերեսը՝ (փողոց, մայթ և բակային տարածքներ) 14896917քմ: Գործող կառուցվածքում առկա է թվով 300 հավաքարարի հաստիք: Արդյունքում այսօր կան փողոցներ և տարածքներ որտեղ սանիտարական մաքրում իրականացվում է 3-4 օրը մեկ անգամ: Ուստի հավաքարարների քանակի ավելացումը օրվա հրամայական է:

Ըստ էության գործող հատիքացուցակի համեմատ նոր հաստիքների ավելացումը կազմում է թվով 138 միավոր: Մնացած հաստիքների վերադասավորումն ու ավելացումը իրականացվում է ի հաշիվ առկա թափուր հաստիքների: Թվով 138 նոր հաստիքների ֆինանսավորումն իրականացվելու է բազմբնակարան շենքերի աղբամուղերի և աղբախցերի փակման և կոնսերվացման արդյունքում առաջացող տնտեսումների հաշվին: Հետևաբար Հիմնարկի 2022թ հաստատված բյուջեի ավելացում տեղի չի ունենում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 17-Ի N106-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄԲԱՑԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի հունիսի 17-ի N106-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 17-Ի N106-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի հունիսի 17-ի N106-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում ծախսերի փոփոխություն չի նախատեսվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
2022 թվականի ապրիլի 19-ի
№ որոշման

«Հավելված
Երևան քաղաքի ավագանու
17.06.2019թ.
N106-Ա որոշման

ԵՐԵՎԱՆԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ և ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

1	Սանմաքրման բաժին
2	Աղբահանության բաժին
3	Ավտոպարկ և տեխնիկական սպասարկման բաժին
4	Ֆինանսատնտեսագիտական բաժին
5	Անձնակազմի կառավարման բաժին
6	ՏՏ և էլեկտրոնային հսկողության համակարգի բաժին
7	Տնտեսական բաժին

ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ և ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

h/h	**Հաստիքների անվանումը**	**Հաստիքների քանակը**	**Հաստիքի ամսական Պաշտոնային դրույքաչափը**	**Ընդամենը ամսական աշխատավարձը**
	Աշխատակազմ			
1	Տնօրեն	1	850,000	850,000
2	Փոխտնօրեն	1	650,000	650,000
3	Գլխավոր ինժեներ-ավտոպարկի պատասխանատու	1	650,000	650,000
4	Տնօրենի օգնական	1	300,000	300,000
5	Գործավար	1	250,000	250,000
6	Վերահսկող	4	300,000	1,200,000
	Ընդամենը	**9**	**3,000,000**	**3,900,000**
	Մասնագիտական բաժիններ			
	Սանմաքրման բաժին			
7	Բաժնի պետ	1	500,000	500,000
8	Հերթափոխի պետ/ բաժնի պետի տեղակալ	2	300,000	600,000
9	Խմբավար պատասխանատու	22	300,000	6,600,000
10	Հավաքարար	500	200,000	100,000,000
	Ընդամենը	**525**	**1,300,000**	**107,700,000**
	Աղբահանության բաժին			
11	Բաժնի պետ	1	500,000	500,000
12	Հերթափոխի պետ/ բաժնի պետի տեղակալ	2	300,000	600,000
13	Գծային պատասխանատու	22	300,000	6,600,000
14	Բանվոր	200	240,000	48,000,000
15	Աղբամաններն ախտահանող բանվոր	4	200,000	800,000
	Ընդամենը	**229**	**1,540,000**	**56,500,000**
	Ավտոպարկ			

16	Ավտոպարկի հերթափոխի պետ (2 հերթափոխ)	2	350,000	700,000
17	Տեխզննող-դիսպետչեր	4	290,000	1,160,000
18	Աղբատարի վարորդ (2 հերթափոխ)	100	300,000	30,000,000
19	Բազմաֆունկցիոնալ մեքենայի վարորդ	40	290,000	11,600,000
20	Փոշեկուլ մեքենայի վարորդ	15	290,000	4,350,000
21	Տրակտորի մեխանիզատոր	20	290,000	5,800,000
22	Բեռնատարի վարորդ	5	290,000	1,450,000
23	Պահեստապետ (2 հերթափոխ)	2	300,000	600,000
	Ընդամենը	**188**	**2,400,000**	**55,660,000**
	Տեխնիկական մաս			
24	Գլխավոր մեխանիկ	1	410,000	410,000
25	Վարպետ	6	410,000	2,460,000
26	Զոդող	1	410,000	410,000
27	Ներկարար	1	290,000	290,000
28	Խառատ	2	290,000	580,000
29	Ավտոէլեկտրիկ	2	290,000	580,000
30	Տեխնիկական բանվոր	4	250,000	1,000,000
31	Ավտոլվացող	2	250,000	500,000
	Ընդամենը	**19**	**2,600,000**	**6,230,000**
	Օժանդակող բաժիններ			
	Ֆինանսատնտեսագիտական բաժին			
32	Բաժնի պետ – գլխավոր հաշվապահ	1	650,000	650,000
33	Հաշվապահ	4	350,000	1,400,000
34	Գնումների համակարգող /մասնագետ	1	400,000	400,000
	Ընդամենը	**6**	**1,400,000**	**2,450,000**
	Անձնակազմի կառավարման բաժին			
35	Բաժնի պետ	1	400,000	400,000
36	Մասնագետ	1	250,000	250,000
	Ընդամենը	**2**	**650,000**	**650,000**
	ՏՏ և էլեկտրոնային հսկողության համակարգի բաժին			
37	Բաժնի պետ	1	400,000	400,000
38	Օպերատոր	5	250,000	1,250,000
	Ընդամենը	**6**	**650,000**	**1,650,000**
	Տնտեսական բաժին			
39	Տնտեսվար	1	300,000	300,000
40	Հավաքարար	2	150,000	300,000
41	Պահակ	4	200,000	800,000
	Ընդամենը	**7**	**650,000**	**1,400,000**
	ԱՄԲՈՂՋԸ	**991**	**14,190,000**	**236,140,000**

»: